Եւ ոչ աստեղքն է քեզ նման,
Զի չերևին ի տուընջեան.
Բայց դու փայլես միշտ անսասան
Լցեալ լուսով արփիական.
Ի յայս միջի փորուածս որ կան,
Ոչ ոք գտայք ի ձեզ նման.
Որ թէ զծաղկունքդ ասեմ նման՝
Որ տերևով և պտղով կան,
Այլ և սոքա ի դէմ աշնան
Թափեն զտերևն և մերկանան։
Ի յայս զգալեացըս տարրական
Դասք արդարացն է ձեզ նման.
Պայծառ պտղով անմահական.
Նոյնպէս և դու սեռ օրհնութեան
Ցաւէտ պտղով միշտ անծորան.
Առատահոս գետոց նման
Որ առոգմամբ զազդումըն տան.
Այլ և աղբիւր ես անմահութեան,
Աղբեր զբաժակն ուրախութեան.
Սերովբէիցն ես դու նման,
Քերովբէիցն ասեմ պարծան։
Զձեզ ինչ գովեմք մեք աննման
Տէր Միքայէլ կաթողիկոս, հայր պատուական։

9 սրանայ անապական

Եւ ընդ կատար գովասանութեանս՝ աստուածային սիրով հարցումն ի մատակայ հեռաստանէ, ամենիմաստ, հաւատարիմ, բարեպաշտ, աստուածասէր և երկիւղած, բարեմիտ և հոգիընկալ, հեզահոգի և առաքինի, բազմաց ցանկալի և մեզ յոյժ ըղձալի, հոգոցս բաղձալի և սրտէ սիրելի, հոգևոր հայր մեր բարի։ Իլխաց երկրիս Իլով քաղաքիս հավասար քահանայք և երեսփոխանք և ժողովուրդք, հարուստ և ռամիկ, այր և կին. Մեք անարժան հնազանդ ծառայքս մեղաք ի լի և պարտապան բիւր քանքարի, չեմք արժանի զքեզ գովելոյ, քանզի և չեմք հմուտ բանի. այլ զսէր սրտիս մերոյ փոքր ի շատէ իմաց լինի։ Զսակաւ գիրս գրեցաք, զի յիշեսցես դու ի բարի. և հարցումն ի խորոց սրտէ բազմատենչ բաղձանօք և անձկատուչոր սրտիւ. ի մայր մածուցմամբ երկրպագութիւն և համբոյր մատուցանեմք, և ձեր գարշապարացդ գլուխ ի գետին դնեմք. թէ, որպէս կեաք ի բերմանց կենցաղոյս և ի վշտաշատ ժամանակէս. և հայցեմք յԱստուծոյ որ հանապազ վասն ձեր մեզ բարիս լսել. բայց թէպէտ մարմնով հեռի եմք ի ձէնջ, այլ հոգով մերձ եմք։ Եւ թէ խոնարհիք ի ձեր բարձրութենէդ ի մեր նուաստութիւնս հարցման աղագաւ, ըստ բնածին բարուց ձերոց զոր ունիք առ հոգևոր որդիքդ, մինչ ի հասեալ ժամս՝ լաւ կամք, առողջ մարմնով և տարտամ հոգով. և առաջիկայն Աստուծոյ եմք անձին և ձեր սուրբ երկնաբացիկ աղօթիցդ. յուսամք յապէնիազն Աստուած, որ ողջ և բարով և խաղաղութեամբ կենայք ի պարծանս մեր և ի յամօթ ամենայն ներհակաց. ամէն։

Եւ ընդ դուզնաքեայ նամակիս ծանուցումն լիցի վեհ իմաստութեանդ քո, հոգևոր հայր մեր, Տէր Միքայէլ կաթողիկոս ամենայն Հայաստանեայց ազգիս, որ յուղարկած նվիրակն Ցամթեցի Տէր Մարտիրոս եպիսկոպոս՝ ծաղկաւէտ կնքեալ շուրջաբերականաւ և սրբալոյս մեռոնաւ հասաւ Իլով քաղաքս, առ վարատեալ ազգս հայոց, որ եմք ի հայրենական դաւառէ որոշեալ և ի մէջ այլասեռ ազանց բնակեալ. և ըստ հայրենական աւանդութեան մե-